ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի

կառավարման խորհրդի նախագահ

«08» սեպտեմբեր 2023 թվական

ԿՏՊՔ ԴԱՍԱԽՈՍԻ ԵՎ ՆՐԱ ՎԱՐԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ (ՎԵՐԱՆԱՅՎԱԾ)

Հրազդան 2023

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն ընթացակարգը սահմանում է ԿՏՊՔ դասախոսների և նրանց վարած դասընթացի գնահատման ընթացակարգը:

1.2 Սույն ընթացակարգի նպատակը դասախոսի աշխատանքի, դասընթացների արդյունավետության, դասավանդման և ուսումնառության որակի գնահատումը և շարունակական բարելավումն է:

1.3 Դասախոսների աշխատանքների, նրա վարած դասընթացների գնահատումը ԿՏՊՔ-ում պարբերական գործընթաց է և կազմում է որակի մշակույթի բաղկացուցիչ մասը:

1.4 Սույն ընթացակարգը բխեցվում է ԿՏՊՔ ռազմավարությունից և Որակի ապահովման քաղաքականությունից:

1.5 Ընթացակարգը մշակում, վերանայվում է ԿՏՊՔ Որակի կենտրոնի կողմից և առաջարկով, հաստատվում ԿՏՊՔ Կառավարման խորհրդի նիստում:

1.6 Սույն ընթացակարգում փոփոխությունները, լրացումները և վերանայումները կատարվում են նույն կարգով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման նպատակն է՝

ԿՏՊՔ-ում դասախոսների աշխատանքների գնահատումը իրականացվում է երկու հիմնական եղանակներով՝ ուսանողների կողմից, ամբիոններում և Ուսումնական մասի կողմից անցկացվող դասալսումների արդյունքում:

Դասընթացների գնահատման նպատակներն են՝

2.1 Դասախոսի աշխատանքների արդյունավետության գնահատումը,

2.2 Դասավանդման և ուսումնառության գործընթացի որակի շարունակաբար բարելավումը,

2.3 Ուսանող-դասախոս հաղորդակցությունը, համագործակցությանը, դասավանդման որակի վերաբերյալ հետադարձ կապի զարգացմանը նպաստելը,

2.4 Դասախոսի մասնագիտական և մեթոդական պատրաստվածության մակարդակի կատարելագործման խթանումը, մանկավարժական հմտությունների և կարողությունների կատարելագործումը,

2.5 Դասախոսների աշխատաքների որակի, մասնագիտական աճի խթանումը,

2.6 Դասավանդման լավագույն փորձի բացահայտումը, տարածումը,

2.7 Դասախոսների կարիքների գնահատումը,

2.8 Դասավանդման գործընթացում առկա բացթողումների, խնդիրների բացահայտումը, շտկումը, բարելավումը:

ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1 Դասախոսի և նրա վարած դասընթացների գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի կամ ուսումնական տարվա ավարտին՝ դասընթացի ավարտից անմիջապես հետո,

3.2 Գնահատվում են դասախոսների աշխատանքները, դասընթացները, նրա ղեկավարած պրակտիկաները,

3.2 Բացի դասընթացի գնահատումներից, իրականացվում են դասավանդողների ընդհանուր գնահատում՝ ըստ մասնագիտությունների, որը կազմակերպվում է ուստարվա մեջ մեկ անգամ,

3.2 Դասախոսների աշխատանքները գնահատվում են ուսանողների և ամբիոնների վարիչների, ՈՒսումնական մասի ղեկավարի կողմից՝ դասալսման կարգի համաձայն,

3.2 Գնահատման հարցաշարերը մշակվում են Որակի կենտրոնի կողմից,

3.3 Հարցաշարերը ենթակա են պարբերական վերանայման, լրամշակման՝ ըստ կարիքի,

3.4 Գնահատումն իրականացվում է ինչպես առցանց, այնպես էլ տեղում՝ թղթային տարբերակով,

3.5 Գնահատման ամփոփումը, վերլուծությունները իրականացվում է Որակի կենտրոնի կողմից, արդյունքները ներկայացվում են դասախոսներին անհատական քննարկման շրջանակներում՝ ըստ անհրաժեշտության ամբիոնի, բաժնի վարիչի և ՈՒսումնական մասի ղեկավարի կամ տնօրենի մասնակցությամբ,

3.6 Ընդհանրական արդյունքները ամփոփվում և քննարկվում են համապատասխան ամբիոնների նիստերում: Քննարկումների արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը,

3.7.Դասալսումների ամփոփ արդյունքները ներկայացվում են ամբիոնների տարեկան աշխատանքների հաշվետվություններում, քննարկվում են ընթացիկ նիստերում,

3.8. Արդյունքների վերլուծությունները կարող են հիմք ծառայել ինչպես դասավանդման լավագույն փորձի վերհանման համար, այնպես էլ կարող են դուրս բերել մասնագիտական և մեթոդական վերապատրաստումների կարիքները,

3.9. Դասախոսների աշխատանքների գնահատումը կարող է իրականացվել նաև Որակի կենտրոնի կողմից սովորողների հետ անհատական հանդիպում-քննարկումների ընթացքում, որի հիման վրա կազմվում է արձանագրություն, ներկայացվում ամբիոնների վարիչներին,

3.10. Գնահատման արդյունքների վերլուծությունները պահվում են Որակի կենտրոնում, գնահատման արդյունքները ընդհանրացված կարգով կարող են դառնալ խմբային քննարկման առարկա՝ Մանկավարժական խորհրդի, ամբիոնների նիստերի ժամանակ՝ նպատակ ունենալով բարելավել և կատարելագործել դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտություններն ու կարողությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ուսանողների կողմից գնահատվում են՝

4.1 Ուսումնական նպաստավոր միջավայրը, դիդակտիկ նյութերը, դասախոսի կողմից տեխնոլոգիաների կիրառումը,

4.2 Ուսումնառության նյութերի, գնահատման թերթիկների, հանձնարարականների որակը և մատչելիությունը,

4.3 Դասախոսի հաղորդակցման մշակույթը, համապատասխան կեցվածքը, խոսքի մշակույթը, մանկավարժական տակտը, բարեվարքության կանոնների պահպանումը, դասախոսի ներդրումը սովորողների մոտիվացման գործընթացում, խրախուսման մեթոդները,

4.4 Դասավանդման և ուսումնառության գործընթացը, դասի նպատակների հստակ ներկայացումը, մատուցվող նյութի բովանդակության մատչելիությունը, ծրագրի ներկայացումն ու բովանդակությունը, դասախոսության թեմայի արդիականության և կարևորության հիմնավորումը,

4.5 Դասախոսի կոմից դասավանդման տարբեր նորարարական մեթոդների և հնարքների կիրառումը՝ դասի նպատակին համապատասխան, դասավանդողի կողմից ուսանողի առանձնահատկությունների և կարիքների հաշվի առնումը, ուսանողների մոտ

համագործակցության, թիմային աշխատաքների կարողությունների ձևավորումը, բոլոր ուսանողների ընդգրկումը դասապրոցեսին,

4.6 Լսարանի և դասաժամի կառավարումը, դասախոսի պարտաճանաճությունը,

4.7 Հետադարձ կապը,

4.8 Դասախոսի հասանելիությունը, դասից դուրս խորհրդատվությունների տրամադրման պատրաստակամությունը,

4.9 Դասի ուսանողակենտրոնության աստիճանի բացահայտումը,

4.10 Համապատասխան որակավորում պահանջող մասնագետների պատրաստման, հմտությունների և կարողությունների ձևավորման աստիճանը,

4.11 Դասախոսի կողմից կիրառվող գնահատման մեխանիզմները, օբյեկտիվությունը, թափանցիկությունը, գնահատման հիմնավորումը,

4.12 Դասընթացում և դասախոսի աշխատանքում ուժեղ և թույլ կողմերի գնահատումը սովորողի կողմից, բարելավման ենթական ուղղությունների բացահայտումը,

4.13 Դասընթացի արդյունքում սովորողների ձեռքբերած ընդհանուր կարողությունները,

4.14 Դասավանդման լավագույն մեթոդների գնահատումը՝ ուսանողի աչքերով,

4.15 Պրակտիկայի արդյունքում ձևավորված հմտությունների և կարողությունների բացահայտումը ուսանողի աչքերով,

4.16 Պրակտիկաների ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը ուսանողի գնահատմամբ:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի պարտականությունները կատարող՝ Վ. Թովմասյան